ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԻ 1920-21ի ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

ՎԱԶԳԷՆ ՀԱԽՈՅԵԱՆ
van.karno@gmail.com

ՄՈՒՏՔ

1920ի քեմալական արշաւանքը Վանանդի (Կարս) եւ Շիրակի նահանգներին[1] պատճառեց մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ, որոնք մեծ հետք թողեցին տեղի բնակչութեան կենսագործունէութեան վրայ: Կարսի անկումից յետոյ քեմալական զօրքերը աւեր ու կոտորած սփռելով անցան Ալեքսանդրապոլի (այժմ Գիւմրի) գաւառին: Ռազմական գործողութիւնների, իսկ յետոյ յիշեալ գաւառի ռազմակալման ընթացքում (1920 Նոյեմբերի 6-1921 Ապրիլի 22) նրանք գործի դրեցին իրենց հայաջինջ քաղաքականութիւնը: Քեմալականների կողմից զանգուածային կոտորածներ տեղի ունեցան Շիրակի նահանգի Ալեքսանդրապոլի գաւառի բոլոր գաւառամասերում նաեւ Ղարաքիլիսայի (այժմ Վանաձոր) գաւառի մի հատուածում (Փամբակի արեւմտեան հատուած), որն աւարտուեց Նոյեմբերի 18ին հաստատուած զինադադարով[2]: Յատուկ յանձնաժողովների կողմից Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառներում դիտարկումներ են կատարուել ինչպէս թուրքական ռազմակալման ժամանակ, այնպէս էլ ռազմակալումից յետոյ: Յօդուածում ներկայացւում են՝ Ալեքսանդրապոլի գաւառում 1920-21՝ քեմալականների կատարած կոտորածները, բռնարարքներն ու կողոպուտը հայ խաղաղ բնակչութեան նկատմամբ: Փորձել ենք վերակազմել գաւառում կատարուած կոտորածների ընդհանուր պատկերը: Ուսումնասիրուել եւ վերլուծութեան են ենթարկուել թեմային վերաբերող՝ Հայաստանի ազգային արխիւի տարբեր ֆոնտերում պահուող փաստաթղթերը (մասնաւորապէս պատմաբան Վարդան Արամի Պարսամեանի ֆոնդը[3]): Նախկին Ալեքսանդրապոլի գաւառի առաջին գաւառամասի մի շարք գիւղերում կատարել ենք դաշտային, բանահաւաքչական աշխատանքներ[4]: Ուսումնասիրուել են թեմային առնչուող Հայոց Յեղասպանութեան թանգա-

---

[1] 1920 Մայիսի 25ին ՀՀ տարածքը բաժանուեց չորս նահանգի՝ Արարատեան, Շիրակի, Վանանդի եւ Սիւնեաց («Հայաստանի նահանգների նոր բաժանումը», *Յառաջ*, 1920, թիւ 126, էջ 2):

[2] Մանրամասն տե՛ս՝ Վազգէն Հախոյեան, «Քեմալականների իրականացրած զանգուածային կոտորածները Փամբակի տարածքում (Շիրակի նահանգ) ըստ ականատես-վերապրածների ընտանեկան յիշողութիւնների (1920-1921 թթ.)», *Յեղասպանագիտական հանդէս* 1(9):2021, էջ 84:

[3] Հայաստանի ազգային արխիւ, ֆ. 240:

[4] Վերապրածների ժառանգների շնորհիւ մեզ հասած յիշողութիւնները պահւում են տողերիս հեղինակի անձնական արխիւում:

ռան-ինստիտուտի (ՀՅԹԻ) ֆոնտերում պահուտղ ձեռագիր յիշողութիւնների բաժնի յուշագրութիւնները, համադրուել են ժամանակի մամուլի եւ մասնագիտական գրականութեան մէջ առկայ տեղեկութիւնները:

ՉՈՐՐՈՐԴ ԳԱՒԱՌԱՄԱՍԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Դէպի Շիրակի նահանգ քեմալականների յարձակման առաջին հարուածներից մէկը հասաւ Չորրորդ գաւառամասին. բնակիչները մասամբ կոտորուեցին, մի մասը դիմեց փախուստի, իսկ մի մասին էլ ուղարկեցին Կարս եւ Թուրքիայի խորքերը[5]: Ամբողջ գաւառամասում սպանուել է 3222 մարդ, գերուել եւ չեն վերադարձել 596ը[6]: Համեմատաբար խոշոր կոտորածներ են իրականացուել՝ Աղին, Սիրվանջուղ (այժմ Լեռնակերտ, Շիրակի մարզ), Խաբուլի (Ղափուլի, այժմ Գուսանագիւղ, Շիրակի մարզ), Սվանվերդի (այժմ Լուսաղբիւր, Շիրակի մարզ), Իմրխան (այժմ Սարատակ, Շիրակի մարզ), Հոռոմ, Փիրթիքեան (այժմ Ծաղկասար, Արագածոտնի մարզ), Ղուշավանք (այժմ Հայկաձոր, Շիրակի մարզ) գիւղերում[7]:

Թուրքական յարձակման ժամանակ տիրող վիճակը կարելի է ներկայացնել մէկ գիւղի օրինակով: Երբ թուրքերը յարձակւում եւ շրջափակում են Ղութնիղշլաղ (այժմ Հովտաշէն, Շիրակի մարզ) գիւղը, բնակիչները երեխաների հետ բոբիկ ու մերկ դիմում են փախուստի, իրենց հետ ոչինչ չվերցնելով: Ձմեռնամուտի ցրտին շատերը ստանում են վնասուածքներ, մատնւում սովի: Նրանք այլ վայրերում չգտնելով ապրելու պայմաններ՝ 2 օր անց վերադառնում են իրենց գիւղերը, բայց այս անգամ քուրդ խուժանն է յարձակւում նրանց վրայ, շատերին ծեծելով սպանում եւ «քարը քարին չթողնելով» թալանում գիւղը, տանելով՝ տեղաշորերը, անասուններին եւն.[8]: Քեմալական զօրքի «բիրինջի թաբուրը» (առաջին գումարտակ) կրկին գալով գիւղերը եւ մնացած գիւղացիներին տանջանքների ենթարկելով հանում է բնակիչների կողմից գետնի տակ պահուած բոլոր հացահատիկը, շորերը, ոսկեղէնը եւ արծաթեղէնը[9]:

Զինադադարի կնքումից յետոյ, 1920 Նոյեմբերի 29ին 4րդ գաւառամասի յանձնակատարը զեկուցում է Ալեքսանդրապոլի գաւառային յանձնակատարին՝ գաւառամասի դրութեան մասին, նշելով, որ գաւառամասում դիտարկումների ժամանակ թուրք սպաները նրանց լաւ են վերաբերուել, իսկ քրդերը չնայած նրանց արած նկատողութիւններին, շարունակել են գիւղե-

---

[5] Մկրտիչ Ներսիսեան, *Հայոց Ցեղասպանութեան անհերքելի փաստաթղթեր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2005, էջ 153:

[6] ՀԱԱ, ֆ. 240, g.1, գ. 240, թ. 30:

[7] Նոյն, թ. 30:

[8] ՀԱԱ ֆ.240, g.1, գ.326, թ. 24:

[9] Նոյն, թ. 24:

ը թալանել, տանելով անասուններին եւ տների իրերը[10]: Նոյն թուականի Դեկտեմբերի 9ի եւ 10ի զեկոյցներում դարձեալ նշում է քրդերի անօրէնութիւնների եւ տիրող սարսափելի դրութեան մասին: Մոլլակէօքչայում (այժմ Մարալիկ, Շիրակի մարզ) ամբողջովին թալանել են բոլորին: Թալանել են նաեւ ոստիկաններին, խլելով հագուստները, զէնքերը: Նրանք հազիւ են փրկուել սպանուելուց: Այսպէս շատ գիւղեր թալանուել եւ աւերուել են, իսկ բնակիչները մատնուել սովամահութեան[11]: Նոյն թուականի Դեկտեմբերի 23ի զեկոյցում նշում է, որ որոշ գիւղերում ոստիկանները սպանուել են: Դրութիւնը վատանում է: Գաւառամասը ամբողջովին ենթարկուել է թալանի[12]: Ալեքսանդրապոլի յեղկոմի անդամ Նահապետը 1921 Յունուարի 14ի ամփոփագրում (վկայութիւն) ներկայացնում է, որ 4րդ գաւառամասի 39 գիւղից բնակելի են մնացել երեքը միայն՝ Մոլլակէօքչան, Հոռոմը եւ Միագիտլուն (չորրորդ գաւառամասի 39 գիւղերի ցանկում նման գիւղ չգտնուեց[13], հաւանաբար՝ Մէջիդլու, այժմ՝ Նոր կեանք, Շիրակի մարզ): Եղել են գիւղերի աւերման եւ հրդեհման դէպքեր[14]: Քրդերը հրդեհել են Դաշղալու (այժմ Քարաբերդ, Շիրակի մարզ) գիւղը[15]: Մայմուդջուղ (այժմ Պեմզաշէն, Շիրակի մարզ) գիւղում բնակւում էին թալանչի քրդեր իրենց քուրդ փաշայի հետ: Գիւղը բոլորովին ոչնչացուած է եղել: Երեխաները եւ կանայք մնացել են բախտի քմահաճոյքին, վերջիներս հալածւում եւ բռնաբարւում են թուրքերի կողմից[16]: Այսպիսով չորրորդ գաւառամասում բնակչութեան նկատմամբ բռնութիւններ գործադրելու մէջ իրենց դերակատարումն ունէին նաեւ քրդերը, որոնց գործողութիւնները շարունակւում էին նաեւ ռազմակալման ընթացքում:

ԵՐՐՈՐԴ ԳԱՒԱՌԱՄԱՍԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Ողբերգական էր դրութիւնը երրորդ գաւառամասում: Այստեղ սպանուածների ընդհանուր թիւը հասնում է 7671 մարդու, գերուել եւ չի վերադարձել 465ը[17]: Այլ աղբիւրի համաձայն կոտորուել են մօտաւորապէս 15,000 մարդ (երեխայ, կին, տղամարդ)[18]: Գաւառամասի գիւղերի համեմատ խոշոր կոտորածներ են տեղի ունեցել Փալութլի (այժմ Արփենի, Շիրակի մարզ), Ղզլղոչ (այժմ Աշոցք, Շիրակի մարզ), Ղուրթ բուլաղ (այժմ Կրասար,

---

[10] Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի գաւառը թուրքական ռազմակալման ժամանակաշրջանում», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 2:2009, էջ 129

[11] Նոյն էջ 137,138:

[12] Նոյն էջ 141:

[13] ՀԱԱ ֆ. 240, ց.1, գ. 240, թ. 29:

[14] Ներսիսեան, էջ 141:

[15] Ալեքսանեան, էջ 135:

[16] Նոյն, էջ 134:

[17] ՀԱԱ ֆ. 240, ց.1, գ. 240, թ. 28:

[18] Նոյն, թ. 21:

Շիրակի մարզ), Դուզ խարաբա (այժմ Հարթաշէն, Շիրակի մարզ), Ճզղլար (այժմ Ցողամարգ, Շիրակի մարզ), Ղզլքիլիսա (այժմ Կարմրաւան, Շիրակի մարզ), Չիֆթալի (այժմ Զոյգաղբիւր, Շիրակի մարզ), Ալիխան (Գետիկ, նախկին Ղուկասեանի շրջանում, 1972ին ապաբնակեցուել է), Բոզյոխուշ (այժմ Մուսայէլեան, Շիրակի մարզ), Չորլի (այժմ Լեռնագիւղ, Շիրակի մարզ) գիւղերում[19]: Տարածաշրջանի մի շարք գիւղերում սա երկրորդ կոտորածն էր: 1918ի օսմանեան արշաւանքի ժամանակ գիւղերից շատերը թալանուեցին եւ հիմնայատակ քանդուեցին: Գերուել, բռնաբարուել, մահմեդականացուել էին հազարաւոր հարսներ, աղջիկներ՝ սկսած ութ տարեկանից: Գիւղերի սարսափահար ազգաբնակչութիւնը փախչում է դէպի Լօռի, թուրքերը խաբէութեամբ ետ են դարձնում, ենթարկելով սուինահարութեան եւ կոտորածի: Երիտասարդութեան մեծ մասը գերուեց, քշուեց Կարսի ուղղութեամբ եւ այլեւս չվերադարձաւ[20]: Այսպէս, հանրապետութեան հռչակումից յետոյ հազիւ էին ոտքի կանգնել բնակավայրերը, երբ սկսուեց քեմալական արշաւանքը: Քեմալական զօրքերը ներխուժում են երրորդ գաւառամաս, գրաւում միքանի գիւղ, դեռ չհասած միւս գիւղերին տեղական Աղբաբայի (1920-30ին այսպէս էին կոչւում Ամասիաի եւ Ղուկասեանի վարչական շրջանները միասին վերցրած) շրջանի մահմեդական բնակչութիւնը ներխուժում են հայկական գիւղերը եւ սկսում թալանել ու կոտորել հայ ազգաբնակչութեանը բացի Ղայղուլի Ղազանչի (այժմ Ղազանչի, Շիրակի մարզ), Քոռ Աղբիւր (այժմ Սիզաւէտ, Շիրակի մարզմ), Դարաքէօյ (այժմ Սարագիւղ, Շիրակի մարզ), Թիթոյի Խարաբա (այժմ Բաւրա, Շիրակի մարզ) եւ Շիշթափա (այժմ Մեծ Սեպասար, Շիրակի մարզ) գիւղերից: Իսկ մնացած գիւղերի բնակիչները սրի են քաշւում[21]: Այս գիւղերում զանգուածային կոտորածներ չեն եղել, բայց առկայ են սպանութիւնների դէպքեր: Այսպէս օրինակ եթէ Ղայղուլի Ղազանչիում սպանուել է 5 մարդ, Քոռ Բուլաղում՝ 200[22]: 1920 Դեկտեմբերի 2ին Աքսանդրապոլի գաւառի յանձնակատարը զեկուցում է ներքին գործոց յանձնակատարին երրորդ գաւառամասի դրութեան մասին, նշելով որ գաւառամասում տիրում է անիշխանութիւն, իսկ թուրք խուժանը իրականացնում է կողոպուտներ, սպանութիւններ եւ այլ բռնութիւններ: Գիւղերի բնակիչները սպանւում են, տարւում է նրանց ապրուստի հիմնական միջոցը՝ անասունները[23]: Նոյն թուականի Դեկտեմբերի 24ին Ալեքսանդրապոլի գաւառային յանձնակատարը ներքին գործոց յանձնակատարին ներկայացնում է, որ գիւղերի փողոցները լցուած են դիակներով: Բոլոր գիւղերը թալանուած են: Ցուրտն ու սովը աւելացնում են զոհերի թիւը: Ասկ-

---

[19] Նոյն, թ. 28:

[20] *Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում*, խմբ. եւ կազմ.՝ Մ.Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, Հայաստան հրատ., Երեւան, 1991, էջ 638:

[21] ՀԱԱ ֆ. 240, ց.1, գ. 240, թ. 21:

[22] Նոյն, թ. 27, 125:

[23] Ալեքսանեան, էջ 130, 131:

եարները եւ խուժանը կոտորածներից յետոյ զանազան տանջանքների են ենթարկում գերիներին եւ մնացեալ մարդկանց: Զուարճանում են: Ծնողներին ստիպում են իրենց տալ իրենց 8-9 տարեկան աղջիկներին եւ 20-25 տարեկան որդիներին: Աղջիկներին բռնաբարում են իսկ որդիներին սպանում, այս ամէնը անում են ծնողների ներկայութեան: Մինչեւ 40 տարեկան կանանց տարել եւ անհետացրել են, իսկ մինչեւ 45 տարեկան տղամարդկանց սպանել: Գաւառամասի գիւղերում բնակիչներ չկան: Կարմիր Ղուլում (Կարմիր բերդ, ամրոց Գիւմրիում, ԺԹ. դար) յիշեալ գաւառամասի գիւղերից շատ գերիներ են եղել՝ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ[24]:

Բազմաթիւ տեղեկութիւններ են ներկայացնում նաեւ յեղկոմների նախագահները: Քեմալական զօրքի Թորոս գիւղ մուտք գործելուց՝ երիտասարդութեան մի մասը փախչում է, իսկ մի մասը մնում է գիւղում: Մտնելով գիւղ, քեմալականները սպանում են մնացածին, գիւղը թալանում, տանելով՝ տնային իրերը, անասուններին, վերջին հացահատիկը, քանդում տները: Մարդկանց սպանում են դաժանաբար՝ կտրելով ականջները, ձեռքերը եւն.[25]: Ալեքսանդրապոլի յեղկոմի անդամ Նահապետը 1921 Յունուարի 14ի ամփոփագրում ներկայացնում է, որ թուրքերը երրորդ գաւառամաս ընդհանրապէս թոյլ չեն տուել մտնել իրենց: Այդ շրջանի 15 գիւղերի բնակիչներին գաղթեցրել են Չիւթալի գիւղը, նրանց ամբողջ հարստութիւնը թալանի մատնելով: Տարել են գերիներ, որոնց գտնուելու վայրը անյայտ էր[26]: Համատարած թալանի հետեւանքով գաւառամասի բնակչութիւնը, ինչպէս միւս գաւառամասերում ենթարկւում է սովամահութեան: Թուրքերի ռազմակալումից յետոյ ողջ մնացածները կերակրւում են կանաչով, այդ պատճառով հիւանդանում են եւ միքանի օրից, ուռչում ու մահանում[27]: *Կարմիր Շիրակ*ի 1921 Յուլիսի 7 եւ Դեկտեմբերի 31ի համարներում կարդում ենք, որ երբեմնի հարուստ եւ հացառատ երրորդ գաւառամասի գիւղերում սովամահութեան դէպքերը լայն ծաւալ են ստանում, որովհետեւ ազգաբնակչութեան միակ ապաւէն «կանաչ»ը արդէն չորացել է, իսկ ձմռանը՝ «ամէնուրեք սովի ուրուականն է տիրում»: Ամէն օր 8-10 անձ մեռնում են սովից: Այսպէս Բանդիւան գիւղում մայրը իր կատուն մորթել եւ կերակրել է իր երեխաներին, որպէսզի նրանք մի օր ուշ մեռնեն, կամ մի օր եւս ապրեն[28]: Քեմալականների կողմից՝ սպանութիւնների տարածուած ձեւերից էին ողջակիզումները: Գիւլլիբուլաղ (Վարդաղբիւր) գիւղից ականատես Արտաշէս Բալոյեանի (գիւղի քահանայ Տէր Վարդանի որդին, որի հայրը կոտորածի ժամանակ գիւղում չէր) վկայութեան համաձայն, 1920ին իրենց գիւղ ներխուժած ասկեարները

---

[24] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.326, թ. 70, 71, 72, 73, 74:

[25] Նոյն, թ. 79:

[26] Ներսիսեան, էջ 141:

[27] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 21:

[28] «Դրութիւնը 3-րդ գաւառամասում», *Կարմիր Շիրակ*, 1921, թիւ 13, էջ 2. նաեւ նոյն՝ «Տեղեկութիւններ գաւառամասերից, կեանքը 3-րդ գաւառամասում», թիւ 30, էջ 2:

զաւթել են գիւղի տները, այնուհետեւ իրականացրել չարագործութիւններ: Ասկեարները գիւղում մնացած բնակիչներին՝ կանանց, երեխաներին եւ ծերերին բռնութեամբ՝ մտրակելով, հրացանի կոթերով եւ սուիններով հարուածելով ու հայհոյելով տանում-լցնում են Գեւո տացուի (տիրացու կամ հոր եղբայր) գոմը եւ մարագը: Զինուած ասկեարները շրջապատում են շինութիւնը, որ ներսում գտնուողները չփորձեն փախչել: Կտուրին, երդիկի շուրջը նախապէս անցքեր են բացում, որտեղ խոտի կոյտեր են դնում, այնուհետեւ մեծ քանակութեամբ նաւթ են լցնում ու այրում: Մարդիկ այրւում կամ էլ ծխախեղդ են լինում: Այրուող բնակիչների մէջ են լինում նաեւ ականատեսի՝ մայրը, եղբայրները, քոյրերը եւ միւս հարազատները[29]: Այս գիւղում ողջակիզւում են 196 հոգի[30]: Կոտորածների էին ենթարկւում նաեւ այլազգիները: Կոտորածի եւ թալանի է ենթարկւում յունական Ալաքիլիսա (այժմ Հովտուն, Շիրակի մարզ) գիւղը, որի 250 բնակիչներից ողջ են մնում 95 անձ, որից 6ը տղամարդիկ[31]: Ռազմական գործողութիւնների ժամանակ իրականացուած զանգուածային կոտորածներից յետոյ չէին դադարում մարդկանց սպանութիւնները: Այսպէս, Թաքնալի (այժմ Գոգհովիտ, Շիրակի մարզ) գիւղում՝ թուրքերը մտնում էին բնակիչների տները, բռնում նրանց կամ կանչում հարցաքննութեան, ենթարկում տարատեսակ տանջանքների (ծեծում, սուինահարում, գլխիվայր կախում ջրհորը, յատուկ պատրաստուած փայտեայ ձողով հարուածում ոտքի թաթերին մինչեւ արիւնահոսելը, շիկացած շամփուրով դաղում ձեռքերը) եւ պահանջում՝ թաքցրած իրերի եւ կամ սնունդի տեղը ասել[32]: Տարածուած էին ծիսականացուած սպանութիւնները. այսպէս, մի մարդու գլխիվայր կախել են գոմի երկու սիւ-ներին, պարանով մի ոտքը կապել են միւս սիւնին իսկ միւս ոտքին կապած պարանը ձգել են ուժգին միւս սիւնին հասցնելու համար այնքան, որ զոհը երկու կէս է եղել[33]:

Այսպիսով կարող ենք փաստել՝ Հայաստանի Հանրապետութեան Աղբաբայի շրջան բնակուող մահմեդական բնակչութեան ներգրաւուածութիւնը երրորդ գաւառամասի կոտորածներին եւ թալանին:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՒԱՌԱՄԱՍԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երկրորդ գաւառամասում՝ համեմատած գաւառամասի միւս գիւղերի, շատ են սպանութիւնները Ղոլղաթ (այժմ Գեղանիստ, Շիրակի մարզ) գիւ-

---

[29] «Պատասխան թուրք կեղծարարներին», *Հայոց Ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր*, 8:2003, էջ 101-5:

[30] Նոյն, էջ 105:

[31] ՀԱԱ ֆ. 240, ց.1, գ. 240, թ. 126:

[32] Գեղամ Պետրոսեան (ծն. 1912, Սարիար), «Ինչ որ յիշում եմ», ՀՑԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 258, էջ 17, 19-22:

[33] Նոյն էջ 20:

ղում[34]: 1920 Դեկտեմբերի 8ին երկրորդ գաւառամասի դրութեան մասին Ալեքսանդրապոլի գաւառի երկրորդ գաւառամասի յանձնակատարի զեկոյցից՝ Ալեքսանդրապոլի գաւառի յանձնակատարին, իմանում ենք, որ Ղոլղաթ գիւղը բնակչութիւն ընդհանրապէս չունի այլ՝ աւերակների կոյտ է: Սպանութիւններ են եղել նաեւ Ղուլիջան (այժմ Սպանդարեան, Շիրակի մարզ) գիւղում: Արթիկ գիւղը (այժմ քաղաք Շիրակի մարզ) ենթարկւում է քուրդ թալանչիների յարձակումներին: Արական սեռի ներկայացուցիչներ չկան, երիտասարդները հիմնականում թաքնուել են Բաշ (այժմ Սարալանջ, Շիրակի մարզ) գիւղում[35]: Գաւառամասի գիւղերում սպանուածների թիւը 291 է, գերուել եւ չեն վերադարձել 306ը[36]: Բռնաբարուել է կանանց 90%[37]: Կազմելով երկրորդ գաւառամասի պատկերը՝ գալիս ենք հետեւութեան, որ այս գաւառամասի գիւղերի բնակչութեան մեծամասնութիւնը դիմել է փախուստի, իսկ տեղում մնացածները չեն խուսափել բռնութիւններից:

ԱՌԱՋԻՆ ԳԱՒԱՌԱՄԱՍԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Առաջին գաւառամասում՝ համեմատած գաւառամասի միւս գիւղերի, խոշոր կոտորածներ են տեղի ունեցել Հաջինազար (այժմ Կամօ, Շիրակի մարզ), Աղքիլիսա (այժմ Կրաշէն, Շիրակի մարզ), Չրախլի (այժմ՝ Ջրառատ, Շիրակի մարզ), Մեծ Քափանակ (այժմ՝ Բասէն, Շիրակի մարզ), Փոքր Քափանակ (այժմ Հովիտ, Շիրակի մարզ), Ջաջուռ, Փոքր Ղարաքիլիսա (այժմ Ազատան, Շիրակի մարզ), Դիրաքլար (այժմ Կառնուտ, Շիրակի մարզ), Ղոնախռան (այժմ Շիրակ, Շիրակի մարզ), 3րդ Արախվալի (այժմ Լեռնուտ, Շիրակի մարզ), Մեծ Սարիար, Դարբանդ (այժմ Կարմրաքար, Շիրակի մարզ) գիւղերում: Ամբողջ գաւառամասում սպանուել է 8133 մարդ, գերուել եւ չի վերադարձել 966ը[38]: Գաւառամասի 34 գիւղի բնակիչներից ողջ են մնացել միայն չորս գիւղերում, այն էլ առանց տղամարդկանց, բացառապէս մեռնող կանացի բնակչութեամբ, որոնց նկատմամբ բռնութիւնները չեն դադարում[39]: Այս շրջանի գիւղերից շատերը նոյնպէս երկրորդ կոտորածն էին տեսնում 1918ից յետոյ: Օսմանեան արշաւանքի ժամանակ Խլի Ղարաքիլիսա գիւղի 1500 բնակչից ողջ էին մնացել՝ 200ը: Այդ շրջանում բռնաբարուել եւ առեւանգուել են աւելի քան 5000 կին ու աղջիկ, որոնցից շատերը թոյն են խմել, չդիմանալով իրենց դէմ գործադրուած գազանութիւններին, շատերն էլ իսլամ են ընդունել: Ջաջուռի շրջակայ գիւղերի երիտա-

[34] ՀԱԱ ֆ. 240, ց. 1, գ. 240 թ. 26:
[35] Ալեքսանեան, էջ 134:
[36] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 26:
[37] Ներսիսեան, էջ 141:
[38] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240 թ. 24, 25:
[39] Ներսիսեան, էջ 143:

սարդներին տարել են մօտակայ լեռները եւ գնդակահարել, դիակները թողնելով գագաթներին եւ ստորոտին[40]:

Վերաշինուած՝ առաջին գաւառամասի մի շարք գիւղերում 1920ին տեղի են ունենում դիմադրական մարտեր (Մեծ եւ Փոքր Քափանակներ, Չրախլի)[41], որոշներում քեմալականներին դիմաւորում են աղ ու հացով, մտածելով այդկերպ կոտորածից փրկուել: Ըստ ականատեսների վկայութիւնների, որոնց՝ սերունդներին փոխանցուած յիշողութիւնները պահպանուել են մինչ օրս, թուրքերին աղ ու հացով են դիմաւորել Դուզքեանդի (այժմ Ախուրեան, Շիրակի մարզ), Դիրաքլարի (այժմ Կառնուտ, Շիրակի մարզ), Թափադոլակի (այժմ Արեւիկ, Շիրակի մարզ) բնակիչները, խոստանալով ընդունել թուրքական իշխանութիւնը: Դուզքեանդ եւ Դիրաքլար գիւղերում աղ ու հացը մօտեցնում են դհոլ-զուռնայի ուղեկցութեամբ «հնչեցնելով տոյ-տոյ պարեղանակը»՝ նրանց սիրաշահելու համար[42]: Թէ որքանով փրկեց այս քայլը անպաշտպան բնակիչներին՝ դժուար է ասել (եւ տալ միանշանակ պատմական գնահատական), այդուհանդերձ այդ գիւղերում սպանութիւններ քիչ են լինում, մինչդեռ Ղարաքիլիսայի գաւառի այն գիւղերը, որոնք դարձեալ աղ ու հացով էին դիմաւորել թուրքերին ամբողջովին կամ մասնակի կոտորուեցին[43]: Խաղաղ բնակիչները, գիւղերի ազդեցիկ մարդկանց նախաձեռնութեամբ, այս քայլին էին դիմում ճարահատեալ, որովհետեւ որոշ վայրերում հայկական զօրքը նահանջել էր, իսկ իրենք մնացել էին թուրքական մահաբեր սրի դէմ միայնակ: Այսպիսի մի դէպք եղել էր 1918ի ձմռանը՝ Արտահանում: Այստեղից շուրջ երեսուն սահնակներով Արդանուչի եւ Շաւշէտի փախստականներին փոխադրել էին Ախալքալաք, որտեղից եօթանասուն սահնակներ կրկին եկել էին՝ մնացածներին եւս փոխադրելու, բայց թշնամին արդէն շրջապատել էր Արտահանը: Քաղաքում մնացած ղեկավար մարմինները երկար խորհրդակցութիւններից յետոյ, որոշում են՝ թուրքերին դիմաւորել աղ ու հացով եւ դհոլ-զուռնայով: Սակայն տասը օր անց թուրքերը եւ քրդերը սկսում են հայ խաղաղ բնակչութեան կոտորածը[44]:

1920 Նոյեմբերի 13ին թուրքերը մտնում են Մեծ Սարիար գիւղ, որը գտնւում էր Ջաջուռ կայարանից մէկ վերստ հեռաւորութեան վրայ, չարչարանքների ենթարկելով կոտորում են 300 հոգու, որից 260 տղամարդ, 40

---

[40] *Հայերի Յեղասպանութիւնը*, էջ 638, 644:

[41] ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 385: Յովակիմ Կարապետեանի (ծն. 1905, Չրախլի) յուշերը: Բանասաց՝ Յասմիկ Խաչատուրի Մուքոյեան (ծն. 1936, Թիֆլիս), որն ապրում էր Շիրակի մարզի Բասէն գիւղում, պատմութիւնը լսել է հօրից՝ դէպքերի ժամանակակից, ականատես-վերապրած Խաչատուր Միքայէլի Հարոյեանից (ծն. 1874, Մեծ Քափանակ):

[42] Բանասաց Յասմիկ Մուքոյեան:

[43] Հախոյեան, էջ 88:

[44] Խորէն Ստամբոլցեան, *Սաթիկի մայրիկը, իրական պատմութիւն զուլումի աշխարհից (գրի առնուած 1925ին)*, հեղինակային հրատ., Երեւան, 2010, էջ 8-14:

կին եւ երեխայ: Թուրքերի հեռանալուց յետոյ սպանուած մարդկանց դիակներ են գտել գիւղի ներքեւում, Երեւան-Թիֆլիս երկաթուղու գծից ներքեւ եւ յանձնել հողին, բոլորը սպանուած են եղել նախապէս միմեանց կապած լինելով, իւրաքանչիւրին սպանել են 30ից մինչեւ 40-50 սուինի հարուածներով: Առաջին անգամ գիւղ են մտել 800 ասկեարով եւ մինչեւ Ապրիլի 21ը մշտապէս ապրել են գիւղում ամենաքիչը 100 ասկեար: Նրանք գիւղերից հաւաքած շուրջ 100 սայլերով վերոնշեալ գիւղից լծկաններով տարել են ամբողջ հացահատիկը, ալիւրը, տեղաշորերը, խալիները, կարպէտները, գիւղատնտեսական բոլոր գործիքները, կահկարասին, մանր եւ խոշոր ընտանի կենդանիներին՝ տաւար, ոչխար, ձի: Բռնաբարուել են կանայք եւ օրիորդները: Թուրքերի հեռանալուց յետոյ, ինչպէս միւս գաւառամասերում այստեղ նոյնպէս մարդիկ կանաչ ուտելով են ապրել[45]: Ղոնախրան գիւղում, որը մօտ էր Ջաջուռին, սպանւում են 600 հոգի, մեծմասամբ տղամարդ: Գիւղը ամբողջովին թալանուել է (հացահատիկ, տաւար, ոչխար, երկրագործական իրեր, զարդեր, տեղաշորեր, հագուստներ): Թուրքական վեցամսեայ ռազմակալումից յետոյ դարձեալ կերակրուել են կանաչով[46]: Թուրքերի հեռանալուց յետոյ գիւղերի յեղկոմների կողմից կազմուած գրեթէ բոլոր ցուցակներում նշւում է, որ գիւղերը ենթարկուել են լիակատար թալանի, հետեւաբար գարնան այդ ամիսներին, ողջ մնացած բնակիչները կերակրուել են «կանաչով»: Հաւանաբար նկատի ունեն կանաչեղէնը՝ վայրի ուտելի բանջարաբոյսերը (շուշան, աւելուկ, եղինջ, կռատուկ, սիբէխ, սինձ, տափոլոռ եւն.), որոնք սննդի մէջ գործածւում են կանաչ եւ եփուած ձեւով: Ալեքսանդրապոլի յեղկոմի նախագահ Սերօ Մանուցեանը 1921 Օգոստոսի 25ին հայյեղկոմին ուղարկուած զեկուցագրում հաղորդում է, որ Ալեքսանդրապոլի գաւառի 4 շրջանից երկուսի բնակչութիւնը «բառիս ամենալայն իմաստով խոտ արածելով է ապրել»[47]:

Քեմալականների կողմից մեծ տարածում էին գտել ողջակիզումները: Զանգուածային ողջակիզումներ են իրականացուել Չրախլի, Մեծ Քափանակ եւ Փոքր Քափանակ գիւղերում[48]: Հաջինազար գիւղի տները ամբողջովին լցուած են եղել դիակներով, շինութիւնները քանդուած, որն էլ վառած են եղել դիակների վրայ: Գիւղի 1875 անձից մնացել է 850ը, մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչներ[49]: Թուրքերի կողմից իրականացուել են ե՛ւ ողջակիզումներ, ե՛ւ դիակիզումներ: Շատ գիւղեր նոյն վիճակում էին: Տղա-

---

[45] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.326, թ. 23,75, 76:

[46] Նոյն, թ. 77:

[47] Հրանտ Աբրահամեան, «Ալեքսանդրապոլի իրադարձութիւնների շուրջ (1920 Նոյեմբեր-1921 Ապրիլ)», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:2007, էջ 132:

[48] Առաւել մանրամասն տե՛ս՝ Վազգէն Հախոյեան, «Քեմալականների իրականացրած զանգուածային կոտորածներն Ալեքսանդրապոլի գաւառում (1920-1921 թթ.)», *Հայագիտութեան հարցեր հանդէս*, 3:2021, էջ 76-78:

[49] ՀԱԱ ֆ.240, ց.1, գ.240, թ. 78:

մարդկանց, կանանց ու երեխաներին հաւաքում եկեղեցիներում ու անասնակերի մարագներում, պատուհաններից եւ դռներից կրակում, այնուհետեւ հրկիզող նիւթեր լցնում եւ այրում՝ դիերն ու ողջ մնացածներին[50]: 1920 Նոյեմբերի 27ին Ալեքսանդրապոլի գաւառի Ա. գաւառամասի յանձնակատարի օգնականի զեկոյցից՝ գաւառային յանձնակատարին տեղեկանում ենք, որ Հաջինազար գիւղում մէկ տան մէջ հաւաքուած են եղել հասակաւոր կանայք, այլ տան մէջ՝ երիտասարդ հարսներ, իսկ մէկ այլ՝ օրիորդներ: Իսկ մէկ այլ տան մէջ հաւաքել էին տղաներին՝ ութ տարեկանից մինչեւ 15 տարեկան: Հասակաւոր կանայք ու տղաները սովից մեռնում էին: Իսկ սարսափելին՝ սկսած 10 տարեկանից բռնաբարում էին բոլոր օրիորդներին[51]:

Արդէն 1921 Յունուարի 16ին Ալեքսանդրապոլի գաւառի Ա. գաւառամասի յանձնակատարը զեկուցում է գաւառային ոստիկանութեան յանձնակատարին գիւղերում տիրող վիճակի մասին, ամբողջացնելով պատկերը՝ իր օգնական Արշակ Սարգիսեանից զանազան գիւղերի մասին ստացուած տեղեկութիւններով: Հաջինազարում հաւաքուած են եղել՝ Ջաջուռի, Աղքիլիսայի, Արախվալիի (Արախվալի 3րդ - Վ.Հ.) բռնաբարուած կանայք ու աղջիկները: Ջաջուռում, Խալիլ փաշայի մօտ, Սարգիսեանցը ցոյց է տալիս իր մանդատը, որին ի պատասխան փաշան մանդատը արհամարհաբար նետում է ախոռներից մէկը: Նա եւ իրեն ուղեկցող 15 ոստիկանները բանտարկւում են, կէս ժամից նրանց ազատ են արձակում, շարքով կանգնեցնում եւ սպառնում գնդակահարել, եթէ այդ կողմերում նրանք եւս մէկ անգամ լինեն: Գիւղում ոչ մի մարդ չի լի-նում, թալանուած գիւղից քիչ հեռու ճանապարհի վրայ տեսնում են 5 կանանց եւ 12 տղամարդկանց դիեր: Գնալով Ղոնախռան, գիւղի շուրջը տեսնում են 20ի չափ կանանց ու տղամարդկանց դիեր, այնտեղ ողջ բնակչութիւն չի լինում: Թոփառլի գիւղում (այժմ Հացիկ, Շիրակի մարզ), նա հանդիպում է փրկուած շուրջ 100 կանանց, որոնցին ղոնախռանցի մի կին պատմում է, որ Ղոնախռան գիւղում տղամարդկանց կոտորել էին, մի մասին գերեվարել, իսկ հարսներին ու աղջիկներին տարել Աղբուլաղ (այժմ՝ Լուսաղբիւր, Լոռու մարզ)[52]: Այստեղ տեսնում ենք, թէ ինչու էր առաւել խստացուած Ջաջուռի տարածքը: Սա առաւել շատ տուժած շրջաններից էր, եթէ յանձնակատարի օգնականը նորից առաջանար կամ գնար կնոջ պատմածի հետքերով՝ կը տեսնէր նաեւ Ջարդի ձորը՝ զանգուածային սպանդի ամենախոշոր վայրը: Թոփառլի գիւղ են եկել 40 ասկեար: Դարբանդ գիւղից կանանց բերել են Թոփառլի, յանձնակատարի օգնականը ցանկացել է դուրս գալ եւ տեսնել, թէ ինչ է կատարուել, սակայն դա

---

[50] ՀԱԱ ֆ. 131, ց.1, գ. 18, թ. 2: Տե՛ս՝ ՀՅԹԻ, թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆ. հ. 103: Յուշագիր՝ Ղահրաման Զատիկի Սուքիասեան (ծն. 1889, Կարսի մարզ, Արազին):

[51] Ալեքսանեան, էջ 127:

[52] Նոյն, էջ 142-43:

վտանգաւոր է եղել: Առաւօտեան ժամը 7ին գնալով իրենց չաւուշի մօտ, նա խնդրելով եւ վա-խեցնելով հազիւ հազ կարողանում է նրանց ճանկերից ազատել այդ կանանց: Բռնաբարել էին 12 տարեկան աղջիկներին, որոնցից 4ը մահացել էր, իսկ 100ի չափ կանանց ու աղջիկների ոստիկանների հետ ուղարկում է Ալեքսանդրապոլ[53]:

Օրթաքիլիսայում (այժմ Մայիսեան, Շիրակի մարզ) եւս նոյն պատկերն է եղել: Ասկեարները սեփականացրել էին կանանց, ստիպում էին ծածուկ հորերի տեղը ասել՝ հանելով հացահատիկներ: Թոփառլի գիւղում այդպէս սպանել էին երկու կնոջ. պատճառը այն է եղել, որ նրանք չէին ասել պահած հորերի տեղը[54]: Այսպիսով, միւս գաւառամասերի համեմատութեամբ՝ առաջին գաւառամասում արձանագրուել են առաւել շատ կոտորածներ, այստեղ էր գտնւում նաեւ կոտորածների խոշոր վայրերից մէկը՝ Հզազի ձորը (Ջարդի ձոր): Այն Շիրակի նահանգի՝ Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառների սահմանագլխին էր՝ Ջաջուռի լեռնանցքում (թամքոց): Այս լեռնանցքը իրար է կապում Փամբակի հովիտը եւ Շիրակի դաշտը: Քեմալականները բռնազաւթուած երկու գաւառների գիւղերից՝ բռնի եւ տարբեր խարդաւանքներով տեղահանել, այստեղ են բերել խաղաղ բնակիչներին ու փախստականներին եւ զանգուածաբար կոտորել[55]: Մէկ այլ խոշոր կոտորածի ձոր էր Ղուզղունի ձորը՝ Չրախլի (Ջրառատ, Շիրակի մարզ) եւ Խանվալի (1946ից՝ Ծաղկասար: 1960ականներից ապաբնակեցուել է, աւերակները գտնւում են Ջրառատից 5 կմ հիւսիս-արեւելք) գիւղերի միջեւ[56]:

ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Կարսի անկումից յետոյ, քեմալական արշաւանքի հետեւանքով Ալեքսանդրապոլում վիճակն օրհասական էր, այդ մասին իմանում ենք Ալեքսանդրապոլից ՀՀ վարչապետին ուղղուած հեռագրից: Հակառակ կառավարութեան բարձր ներկայացուցիչների հաւաստիացումներին եւ պահանջներին, որ ոչ ոք չպէտք է լքի իր գործը, քանզի այդ ծանր պայմաններում ճակատը կը կազմալուծուէր, 1920 Նոյեմբերի 5ի լուսաբացին քաղաքը մատնուած էր անիշխանութեան, թալանի եւ աւերման: Ալեքսանդրապոլի նահանգային, քաղաքային, գաւառային եւ հասարակական բոլոր հիմնարկների վարիչները, պաշտօնեաներն անհետացել էին եւ բազմահազարանոց քաղաքը մատնուել էր ոչնչացման: Պետական եւ հասարակական գոյքը թալանուել էր, տեղի էին ունեցել նաեւ հրդեհներ: Երկաթուղու կայարանը նոյնպէս թալանուել էր եւ աւերուել[57]: Այդ խուճապահար եւ դատա-

---

[53] Նոյն, էջ 143:
[54] Նոյն:
[55] Առաւել մանրամասն տե՛ս՝ Հախոյեան, էջ 78-80:
[56] Բանասաց Յասմիկ Խաչատուրի Մուքոյեան:
[57] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 96, 97:

պարտելի փախուստից յետոյ Ալեքսանդրապոլի ժողովուրդը զօրավար Սիլիկեանի թոյլտուութեամբ ժողով անցկացնելով ընտրում է 15 հոգուց բաղկացած համախոհական մարմին, որը զբաղուելու էր իրավիճակով[58]: Այս դէպքերի մասին հաղորդում է նաեւ ժամանակի մամուլը, նշելով, որ Նոյեմբերի 4ին, երբ Ալեքսանդրապոլի շրջանում սկսուել էր ուժեղ թնդանօթաձգութիւն եւ քաղաքը վտանգուած էր, Շիրակի նահանգապետ Կարօ Սասունին անհրաժեշտ համարեց վերցնել նահանգային ոստիկանութիւնն ու շտապել ռազմաճակատ, օգնութեան հասնելու կռուողներին: Մինչդեռ քաղաքային ինքնավարութեան եւ քաղաքացիական իշխանութեան մի շարք ղեկավարներ, հակառակ կառավարութեան հրահանգի, խուճապի մատնուած թողնում են քաղաքը եւ փախչում[59]: Քաղաքում մեծ թիւ էին կազմում 1915ի Մեծ Եղեռնից փրկուած եւ 1920ին Վանանդի նահանգից փախած գաղթականները, որոնք ահաբեկուած մօտեցող թուրքական զօրքերի կոտորածներից՝ դիմում են փախուստի: Կարսից Ալեքսանդրապոլ ընկած գիւղերի բնակչութեան մեծ մասը, շուրջ 60,000 գաղթականներ փախչում են Ղարաքիլիսայի գաւառ, հասնելով Ղարաքիլիսա, Դիլիջան, մինչեւ Սանահին: Ալեքսանդրապոլից այստեղ հասած շուրջ 7000 գաղթականներին Վրաստանի կառավարութիւնը թոյլ չի տալիս առաջանալ, օգտուելով առիթից՝ այն համարելով սահմանագլուխ: Այդուհանդերձ Արդահան-Արտանուչ ճամփան լցուած էր հայ կանանցով ու մանուկներով, որոնք Ալեքսանդրապոլից ու Կարսից փախչում էին Բաթում, որպէսզի խուսափեն առաջացող քեմալական զօրքից: Սովահար փախստականները լցում էին նաեւ Թիֆլիս, կեանքի ապահովութիւն գտնելու յոյսով: Երեւանի շրջանի գիւղերում նոյնպէս հաստատուել էին գաղթականներ[60]: Ղարաքիլիսայի գաւառում հաստատուած գաղթականները յետագայում որոշակի ապահովութիւն են ձեռք բերում՝ Նոյեմբերի 18ի զինադադարով հաստատուած «չէզոք գօտում», որը ձգւում էր Նալբանդ կայարանից մինչեւ Համզաչիման (այժմ Մարգահովիտ, Լոռու մարզ) այն սակայն գտնւում էր թուրքերի վերահսկողութեան ներքոյ[61]: Մինչեւ զինադադարը՝ Նոյեմբերի 15ին, Ղարաքիլիսայի գաւառի Փամբակի հովտի արեւմտեան հատուածում քեմալականները տեղի բնակչութեան հետ կոտորում են նաեւ Ալեքսանդրապոլի անկումից յետոյ այստեղ պատսպարուած՝ 7500 փախստականների՝ Կարսի եւ Ալեքսանդրապոլի շրջաններից[62]: Քեմալականները Ալեքսանդրապոլի կայարա-

---

[58] Նոյն:

[59] «Դէպքերն Ալեքանդրապոլում», *Յառաջ*, 1920, թիւ 245, էջ 4:

[60] «Հայկ. անկախութիւնը փրկելու համար Հայաստանի ժողովուրդը փրկենք», *Ժողովուրդի ձայնը*, 1920, թի 664, էջ 2. նաեւ նոյն՝ «Հազարաւոր հայ փախստականներ կ'ապաստանին Վրաստան», 1920, թիւ 667, էջ 3:

[61] Կտրիճ Սարդարեան, «Համաշխարհային յեղափոխութեան արեւելեան խաչմերուկում», *Գարուն*, 4:1990, էջ 43:

[62] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 124, թ. 6, ֆ. 114, ց. 1, գ. 131, թ. 12, ֆ. 114, ց. 2, գ.27, թ. 86:

նում աշխատելու համար հաւաքագրուած մարդկանց տանում էին Կարս, Էրզրում, որտեղ նրանց մերկ, ոտաբոբիկ ստիպում էին աշխատել օրական 14-15 ժամ՝ նրանց տալով միայն մէկ ֆունտ հաց: Քաղաքի գրեթէ բոլոր մասնագէտները ուղարկուել էին այնտեղ[63]:

Թուրքական հայասպան քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ թուրքերի եւ բոլշեւիկների կողմից Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանութիւն հաստատելուց յետոյ (1920 Նոյեմբերի 17): Նորաստեղծ իշխանութիւնը թուրքերը ծառայեցրին իրենց շահերին՝ հայերին հանելով հայերի դէմ իբր թէ «հակայեղափոխականներ եւ յեղափոխականներ»: Աջակցելով նորաստեղծ Ալեքսանդրապոլի յեղկոմին, թուրքերի հիմնական նպատակը, ոչ թէ քաղաքում եւ գաւառում կարգ ու կանոն հաստատելն էր, այլ այդ մարմնի միջոցով տեռորի եւ թալանի քաղաքականութիւն իրականացնելը: Ստեղծուած իշխանութեան մարմինները սեփական ժողովրդին թալանելու գործում գերազանցում են մէկը միւսին[64]: Գաւառի բնակչութեանը թալանելուց եւ կոտորելուց յետոյ, դրդելով յեղկոմին յանցաւոր արարքների՝ սեփական բնակչութեան նկատմամբ, թուրքերը բացայայտ վարկաբեկում են յեղկոմին: Թուրքերը սկսում են յարձակումները յեղկոմի անդամների վրայ, գիշերով գնդակահարում են կումունիստներին[65]: Թուրքերի թալանն ուղեկցւում էր բնակչութեան սպանութիւններով: Թուրքերը հայերին սպանում էին որտեղ պատահէր իսկ յանցագործութիւնները կոծկում էին դիակները թաքցնելով: Տանջանքներով սպանուած մարդկանց դիակները յայտնաբերւում են միայն թուրքերի հեռանալուց յետոյ: Քաղաքային դումայի զեկուցագրերից մէկում նշւում է, որ մեծ թուով դիակներ են յայտնաբերուել յատկապէս քաղաքի մարքազի, կայազօրի պետի, քաղաքի պարէտի, ոստիկանապետի ապրած տների նկուղներում[66]: Տարբեր հնարների դիմելով եւ նախօրօք տրուած գաղտնի հրամանով, որով ասւում էր, որ հայերին սպանելու համար թէկուզ բարեկամացէք նրանց հետ, թուրքերը սպանում էին հայերին: Կար կազմակերպուած յատուկ խումբ, որն իր գործակալների՝ գերազանցապէս Աղբաբայի թուրքերի միջոցով, նախապէս կազմուած ցուցակներով ձերբակալում էր ունեւոր հայերին եւ գցում նկուղները, նրանցից վերցնելով մեծ չափերի փրկագին: Փրկագինը ստանալուց յետոյ նրանց սպանում էին, քչերին էր յաջողւում ազատուել[67]:

Յունուարի 1ից թրքական հրամանատարութիւնը յանձինս իր սպաների, շրջում էր քաղաքի բոլոր փողոցները, թալանում եւ տանում ողջ շարժական

---

[63] Աբրահամեան, էջ 126-27:

[64] Կարինէ Ալեքսանեան, «Թուրքիայի ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակութիւնն Ալեքսանդրապոլի գաւառում», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 1:2005, էջ 20-21:

[65] Նոյն, էջ 22:

[66] Նոյն, էջ 22:

[67] Նոյն, էջ 22:

գոյքը, գրասեղաններ, աթոռներ, մահճակալներ, փայտի մնացորդներ, վերմակներ, հայելիներ, ամաններ, կահկարասիք եւն. եւ այդ բոլորը քաղաքի իշխանաւոր Քեազիմ Բէյի յայտարարութեան հրամանով[68]: Ալեքսանդրապոլը տնտեսապէս քայքայւում էր երկարատեւ եւ չվերջացող թալանի հետեւանքով: Երկաթուղային գոյքը թալանուել էր: Կարս եւ Թուրքիայի խորքերն են տարել դեպոյի մեքենաները: Ասկեարները կատարում են ձերբակալութիւններ, տներից հանում, մերկացնում են մարդկանց, թալանում, բռնաբարում, ներքնայարկերում գնդակահարում անմեղ բանուորներին եւ գիւղացիներին: Մասնագէտ բանուորներին եւ արհեստաւորներին հաւաքում եւ ուղարկում են Էրզրում: Յունուարի սկզբներին Սեւ եւ Կարմիր աշտարակների մէջ յայտնաբերւում են բազմաթիւ դիակներ: Բերդում գտնւում են մեծ թուով կանայք[69]: Արդէն 1921 Յունուարի 21ից, թուրքական բանակը սկսում է բացայայտ թալանել Ալեքսանդրապոլ քաղաքը[70]: Ալեքպոլի յեղկոմը դարձել էր պատրանք: Թուրքերի գրաւման հետեւանքով երկրի քայքայման, բնաջնջման, ինչ որ չափով իրենց մասնակցութեան «պատասխանատուութիւնից», որին դրդել էին թուրքերը, փորձելով ազատուել Ալեքպոլի յեղկոմը իր Յունուարի 25ի ժողովին որոշում է թողնել իշխանութիւնը[71]: Պարբերաբար մարդկային դիեր են յայտնաբերւում թաղերից, մառաններից, ջրհորերից եւ հորերից: Մայիսի 2ին բերդում յայտնաբերւում է մի հոր ամբողջովին լցուած դիերով, որոնց քանակը անհնար է լինում որոշել: Զոհերը սպանուել էին բազմաթիւ չարչարանքներից յետոյ. նրանք չունէին քիթ, ականջներ, աչքեր, շուրթեր եւն.[72]: Քեմալականները շարունակեցին իրենց նախորդների ցեղասպան քաղաքականութիւնը հայերի նկատմամբ: Այդ քաղաքականութիւնը Կարսի անկումից եւ Վանանդի նահանգի ռազմակալումից յետոյ, առաւել պատկերաւոր դարձաւ Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառներում: Դեռեւս 1920 Նոյեմբերի 8ին քեմալականների արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարը ճշտել էր Թուրքիայի բուն նպատակը, երբ զօրքերի հրամանատար Քեազիմ Քարապեքիր փաշան գրում էր, որ Հայաստանը զբաղեցնում է թուրքական բաւականին ընդարձակ տարածութիւն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համարում այն ոչնչացնել՝ ինչպէս քաղաքականապէս, այնպէս եւ մարմնապէս[73]:

---

[68] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 49:
[69] Նոյն, թ. 48:
[70] Ալեքսանեան, էջ 23:
[71] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 49:
[72] ՀԱԱ, ֆ. 131, ց. 1, գ. 18, թ. 15, 16:
[73] Զաւէն Մսըրլեան, «Քեմալական Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը հայոց նկատմամբ (1919-1942)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 38:2018, էջ 395-96:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այսպիսով Ալեքսանդրապոլի գաւառի կոտորածներին վերաբերող փաստաթղթերի համեմատական վերլուծութեան արդիւնքում գալիս ենք այն եզրակացութեան, որ դրանք ամբողջութեամբ չեն ներկայացնում կոտորածների պատկերը: Գաւառամասերում կոտորածների թուերը ներկայացուած են նախնական, ինչպէս Ալեքսանդրապոլի յեղկոմի կողմից Հայկական ԽՍՀ յեղկոմին տրամադրած տուեալները[74]: Այդ փաստաթղթերը կազմուել են հիմնականում գաւառամասերի յեղկոմների կողմից: Հաւանաբար մարդկային կորուստների հաշուառումներն իրականացուել են գիւղերում ողջ մնացած բնակիչների ներկայութեամբ եւ տեղեկամատեանների տուեալներով: Հարց է առաջանում թէ որքան էր Շիրակի նահանգում (Ալեքսանդրապոլի եւ Ղարաքիլիսայի գաւառներ), մասնաւորապէս Ալեքսանդրապոլի գաւառում կոտորուած փախստականների (Վանանդի նահանգից եկած) ընդհանուր թիւը: Ներկայացուած տուեալները վերաբերու՞մ են արդեօք նաեւ փախստականներին եւ ի՞նչ սկզբունքով հաշուառում իրականացուեց, կամ իրականացուե՞ց առանձին հաշուառում: Համեմատելով առանձին գաւառամասերի մարդկային կորուստների տուեալները՝ ընդհանրական տուեալների հետ, գալիս ենք այն եզրակացութեան, որ դրանք յետագայում նոր դիտարկումների եւ հաշուարկների արդիւնքում, հաւանաբար լրացուել են եւ վերաբերում են նաեւ Կարսի նահանգի փախստականներին: Ստորեւ՝ Վրացական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին ուղղուած կապի աշխատակից Կոստանոշվիլու՝ 1921 Մայիսի 13ի յայտագրի Ալեքսանդրապոլի քաղաքում եւ գաւառամասերում, ըստ տեղական իշխանութիւնների յանձնաժողովի տուեալների, քեմալականների կարճատեւ տիրապետութեան ժամանակ կատարած խժդժութիւնները[75]:

Քեմալականների տիրապետութեան ժամանակ կատարած խժդժութիւնները							
	սպանուել	Վիրաւոր	Գերեվար/ առեւանգուել	կախաղան հանուել	մահացել	Սովամահ եղել	Բռնաբարուել
այր	30,000	20,000	18,000	25	10,000		
կին	15,000	10,000	2000			500	25,000
աղջիկ	10,000	5000	3000			1000	10,000
երեխայ	5000	3000				10,000	
Ընդհ.	60,000	38,000	23,000	25	10,000	11,500	35,000

Օրինակ տղամարդկանց պարագայում սպանուածների մէջ պէտք է, որ լինեն ինչպէս տեղացի բնակիչներ, փախստականներ, այնպէս էլ ռազմական գործողութիւնների մասնակից հայ զինուորներ՝ Հայաստանի Հանրապետութեան այլ բնակավայրերից: Հարց է առաջանում նաեւ թէ որքան էր

[74] Ներսիսեան, էջ 155:

[75] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 169, թ.13: ֆ. 114, ց. 1, գ. 46, թ. 4. նաեւ՝ Ներսիսեան, էջ 155-56, 160-61 (աղբիւրներում կան թուերի անհամապատասխանութիւններ):

թուրք-հայկական պատերազմի ժամանակ զոհուած զինուորների թիւը: Այսպիսով ընդհանուր տուեալներով՝ քեմալականների կողմից զինագրաւուած Ալեքսանդրապոլի գաւառում 1920 Նոյեմբեր-1921 Ապրիլ ամիսներին կոտորուել, գերութեան են քշուել եւ սովամահ եղել շուրջ 100,000 հայեր[76]:

Ամփոփելով վերը նշուածը՝ կարող ենք հաստատել, որ թուրքական բանակի զանգուածային կոտորածները Ալեքսանդրապոլի գաւառում՝ ցեղասպան գործողութիւններ էին: Թուրքերը ոչնչացրել են գրաւեալ տարածքների հայ խաղաղ բնակչութեանը, բռնութեամբ տեղահանել նրանց: Այդ զանգուածային յանցագործութիւններն իրագործում էին մարդկանց ֆիզիկապէս ոչնչացնելու եւ հոգեկան խեղումներ պատճառելու մտադրութեամբ: Դրանք ՄԱԿի 1948 Դեկտեմբերի 9ի «Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ դրա համար պատժի մասին» ուխտի՝ տուեալ յանցագործութեան յանցակազմի կարեւոր բաղադրատարրերն են:

THE TURKISH MASSACRES IN THE PROVINCE OF ALEXANDRAPOLE IN 1920-21

(Summary)

VAZGEN HAKHOYAN
van.karno@gmail.com

The Turkish-Armenian war of 1920 had a tragic impact on and consequences for the population of Vanand (Kars) and Shirak provinces in the Republic of Armenia, which were occupied by the Turks for a while.

The paper details the massacres, repressions and looting the Turks conducted in the four districts of Shirak province during their occupation. The paper argues that, alongside economic destruction, the occupying Kemalist forces aimed at annihilating the local Armenian population in 1920-1921. Indeed, the Turkish military occupation conducted an anti-Armenian policy and mass massacres, which resulted in the depopulation of the province and the loss of vital means of survival and reproduction for the inhabitants. References are made to the genocidal actions of the Kemalists against the Armenian civilian population and the forms of mass executions.

The author notes that these acts are considered genocidal according to the provisions of the 1948 Genocide Convention.

[76] *Հայոց պատմութիւն, հ. 4րդ, գիրք առաջին (նորագոյն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.)*, Զանգակ, Երեւան, 2010, էջ 216: